

և Ուկրաինայում առաջին հայերեն գրքի տպագրության մասին: Նա նշեց, որ սրանից 350 տարի առաջ Հովհաննես Քարմատանեցի սկսած և անբարենպաստ պայմանների պատճառով շեղված տպագրական գործունեությունը արժանի է ամենաուշագործ վերաբերմունքի: Պետք է մանրակրկիտ կերպով հետազոտել ոչ միայն XVII դարի լվովի հայկական տպարանի կարճատև պատմությունը, այլև լվովահայերի ամբողջ տպագրական գործունեությունը՝ բնագույն մինչև XX դարի 30—40-ական թթ., որովհետև դա կարևոր նշանակություն ունի թե՛ Ուկրաինայի և թե՛ հայ ժողովրդի մշակույթի, հատկապես մամուլի պատմության համար:

Պատմական գիտությունների թեկնածու Ն. Կ. Կրիվոնոսը, զեկույցելով Ուկր. ՍՍՀ լվովի կենտրոնական պետական պատմական արխիվի այն նյութերի և փաստաթղթերի մասին, որոնք վերաբերում են լվովահայերի XVII դ. երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական և մշակութային պայմաններին, ասաց, որ այդ պրոբլեմի ուսումնասիրության համար անհրաժեշտ բոլոր աղբյուրների գերակշռող մասը կենտրոնացված է հիշյալ արխիվում: Այսպես կանգ առավ մի շարք կարևորագույն, զեռնա ընտաղոտված փաստաթղթերի վրա, որոնք յափազանց արժեքավոր են լվովի հայ արհեստավորների գործունեության մասին պատկերացում կազմելու համար:

Այնուհետև Կոնֆերանսում իրենց գիտական հաղորդումներով հանդես եկան լվովի մարզային արխիվի գիրենկտոր Գ. Ս. Սիդոնենկոն, Զեռնովիցիի պետական մարզային արխիվի գիտաշխատող Բ. Ի. Սիդորը, Ուկրաինական ՍՍՀ լվովի կենտրոնական պետական պատմական արխիվի գիտաշխատող Ս. Յա. Մացյուկը, լվովի մարզային արխիվի գիտաշխատող Վ. Ի. Շևչուկը, որոնք արխիվային տվյալներով լուսարար-

անցին գիտության և մշակույթի առաջադեմ հայ գործիչների գործունեությունը լվովում XIX դ., Բուկովինայի հայ դազթավայրերի առաջացման պատմա-աշխարհագրական պայմանները, XVI—XVII դդ. լվովահայերի թողած փաստաթղթերի ֆիլիզոսոֆիայի աղբյուրագիտական նշանակությունը: Արեմտյան Ուկրաինայում հայոց լեզվի դասավանդման պատմությունը և մի շարք այլ հետաքրքիր պրոբլեմներ:

Կոնֆերանսում բեմերցվեց ակադեմիկոս Ի. Պ. Կրիվյակևիչի «Ուկրաինա-հայկական պատմական փոխհարաբերությունների խորագրին ուսումնասիրության համար» վերնագիրը կրող զեկույցման տեքստը: Նշելով այն խոշոր գիտահետազոտական աշխատանքը, որ տարվում է երկու հանրապետությունների պատմաբանների համատեղ ջանքերով, Ի. Պ. Կրիվյակևիչը գրեց, որ հասել է ժամանակի, երբ առանձին, մասնավոր պրոբլեմների հետազոտությունից բացի գիտականները պետք է առավել մեծ ուշադրություն նվիրեն հայ-ուկրաինական պատմական կապերը լուսարանող մի ամբողջական սինթետիկ աշխատություն ստեղծելու հարցին:

Կոնֆերանսի արդյունքները ամփոփեց Հայկ. ՍՍՀ պատմության ինստիտուտի սեկտորի վարիչ Վ. Ոսկանյանը: Վերջում Կոնֆերանսն ընդունեց հանձնարարականներ՝ հայ-ուկրաինական պատմական կապերի ուսումնասիրության ուղղությամբ հետազայում տարվելիք աշխատանքների մասին:

Մեծ հետաքրքրություն առաջացրեց լվովի կենտրոնական պետական արխիվի սրահներից մեկում կազմակերպված ցուցահանդեսը, որտեղ ցուցադրված էին Ուկրաինայի հայ դազթավայրերին վերաբերող պատմական նյութերի հաշիւներն, լատիներեն և լեհերեն մի շարք նմուշներ:

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՐԱԿԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՇՆԱՐՀԱՅԻՆ Ի ԿՈՆԳՐԵՍՈՐ

Այս տարվա օգոստոսի վերջին — սեպտեմբերի սկզբին Սոֆիայում տեղի ունեցավ բալկանադետների առաջին համաշխարհային կոնգրեսը՝ նվիրված բալկանյան և Հարավ-արևելյան Եվրոպայի ժողովուրդների պատմության, հնագիտության, ազգագրության, լեզվաբանության, գրականության և արվեստի պրոբլեմներին: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էին աշխարհի 21 երկրների շուրջ 1300 պատվիրակներ, այդ թվում հանրաճշակ բալկանադետներ Վ. Գեորգիևը, Դ. Անդելովը (Բուլղարիա), Կ. Դայկովիչիուն, Ե.

Կուկուրակին (Ռումինիա), Ա. Ֆրադիստասը, Գ. Զուկինթինոսը (Հունաստան), Մ. Գարաշին (Հարավսլավիա), Ա. Միրամբերը (Ֆրանսիա), Ա. Պերտուսին (Իտալիա), Ռ. Սայմը (Անգլիա) և շատ ուրիշներ:

Կոնգրեսի հանդիսավոր բացման ժամանակ ողջույնի խոսքով հանդես եկավ Բուլղարական Ժողովրդական Հանրապետության Մինիստրների սովետի նախագահ Թոդոր Ժիվկովը: Նա ընդգծեց բալկանադետների համաշխարհային անդրանիկ համամոդովի բացառիկ գիտական ու բաղաբա-

կան նշանակությունը բալկանադիտության զարգացման և բալկանյան ժողովուրդների հետագա մերձեցման գործում:

Սովետական պատվիրակության (մոտ 40 դիտնական) ղեկավար, ակադեմիկոս Ե. Ժուկովը իր ուղևորների խոսքում ասաց. «Բալկանյան երկրների մեծ մասում բարձր տիպի հասարակական հարաբերությունների հաղթանակը վերացրել է իմպերալիստների տիրահռչակ բալկանիզացիայի քաղաքականության հիմքը... Երբեմնի սվառողի պահեստը Բալկանները վերածվել են ռուսների թերակղզու... Բալկանյան ժողովուրդները դարձել են իրենց բախտի տերը և հենց դրանում է նրանց արդի խաղաղ ու արդյունավետ համագործակցության երաշխիքը»:

Կոնգրեսի պլենար նիստում լսվեց երեք հիմնական (կոնկրետ ուժերով կազմված) զեկուցում: Դրանցից առաջինի թեման էր՝ «Հարավարևելյան Եվրոպայի ժողովուրդները և նրանց դերը պատմության մեջ»: Լինելով բալկանյան ժողովուրդների ռեզիդենտ պատմության ստեղծման առաջին լուրջ փորձը, զեկուցումը, ինչպես նաև, ելույթ ունեցողները, գերծ չէր էական թերություններից: Այսպես, բալկանյան ժողովուրդների ուշ միջնադարի և հատկապես նոր ժամանակների ռեզիդենտ պատմության փոխալին փաստորեն ստացվել էր առանձին ժողովուրդների պատմության մեխանիկական միավորում:

Երկրորդ հիմնական զեկուցումը, որ կրում էր «Հարավարևելյան Եվրոպայի ժողովուրդների գրականության զարգացումը՝ կապված այլ ժողովուրդների գրականության հետ (XVIII դարից մինչև մեր օրերը)» խորագիրը, լուսաբանում էր ալբանական, բուլղարական, հունական, ռումինական և հարավսլավական գրականության ու արվեստի միջև գոյություն ունեցող ընդհանրությունները և առանձնահատկությունները, նրանց օրգանական կապերն ու փոխազդեցությունները:

Երրորդ հիմնական զեկուցումը նվիրված էր բալկանյան ժողովուրդների լեզուների զարգացմանը և կապերին:

Վերոհիշյալ պարլեմենտների ուսումնասիրությունը հանդեցրել էր գիտական ու քաղաքական այն կարևոր եզրակացության, որ բալկանյան և Հարավարևելյան Եվրոպայի ժողովուրդները, ընդամենը բոլորի և էական առանձնահատկությունների առկայությանը, ունեն բազմաթիվ ընդհանրություններ, քանի որ նրանք անցել են պատմական զարգացման մեկ ընդհանուր ուղի: Ուստի նրանց համագործակցությունը, անկախ այս կամ այն երկրում գոյություն ունեցող հասարակական-քաղաքական կարգերից, պատմականորեն արդարացված և կենսական անհրաժեշտություն է:

Պլենար նիստից հետո կոնգրեսը փաստորեն վերածվեց շուրջ միջազգային համաժողովների, որոնցից առաջինը զբաղվեց բալկանյան և Հարավարևելյան Եվրոպայի ժողովուրդների հետադիտության ու պատմության հարցերով, երկրորդը՝ լեզվի ու գրականության, երրորդը՝ ազգագրության և շորորորդը՝ արվեստի:

Անադիտության եկրասեկցիայում կարգացվեց 37 զեկուցում, որոնցում արծարծվում էին Հարավարևելյան Եվրոպայի հնագույն բնակիչների կյանքն ու կենցաղը: Մեծ հետաքրքրություն առաջ բերեցին Գ. Գեորգիևի (Բուլղարիա), Ա. Բենացի (Հարավսլավիա) և Վ. Միլոշիչի (ԳՅՀ) զեկույցները, որոնք նվիրված էին նեոլիթյան կուլտուրայի ծագմանն ու զարգացմանը Բալկաններում: Հիմնվելով Բուլղարիայում, Հարավսլավիայում, Հունաստանում և Ռումինիայում նախապատմական բնակավայրերի պեղումներից ձեռք բերած հարուստ նյութերի վրա, մի շարք գիտնականներ աչացացեցին, որ Հարավարևելյան Եվրոպայում և, հատկապես, Բալկանյան թերակղզու հարավային մասում մ. թ. ա. VI—V հազարամյակում գոյություն է ունեցել բարձր կուլտուրա, որ Հարավային Բուլղարիայում կուլտուրան (բրոնզի դարաշրջանում) զարգանում էր սերտորեն կապված և զուգընթաց հարևան երկրների բնակչության կուլտուրայի հետ: Մի շարք գիտնականներ անդրադարձան իլլիրիացիականների, թրակիացիների և դակների նյութական ու հոգևոր մշակույթի հարցերին, Հունաստանի հետ մ. թ. ա. առաջին հազարամյակում նրանց ունեցած առնչություններին: Ընդ որում առաջարկվեց հրավիրել հատուկ սիմպոզիում՝ նվիրված թրակա-իլլիրիական կուլտուրային ու պատմությանը: Ենթասեկցիայում լսվեցին հաղորդումներ Ալբանիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Թուրքիայում և Ուկրաինայում վերջին տարիներին կատարված հնագիտական պեղումների արդյունքների մասին:

Հին շրջանի պատմության եկրասեկցիայում լսվեց 18 զեկուցում, որոնցում բացահայտվում էին սոցիալ-տնտեսական հարաբերությունները Բալկաններում, պետականության ստեղծման պրոցեսը և այդ պրոցեսում թրակիական որոշ ցեղերի խաղացած դերը: Մի շարք գիտնականներ անդրադարձան մերձսևծովյան հունական գաղութների, քաղաքաշինության և քաղաքային կյանքի հարցերին: Բուլղար պատմաբան Ռ. Կանդևան, հենվելով հռոմեական բանաստեղծների և զրոդների տվյալների վրա, նկարագրեց Հյուսիսային Բալկանների բնակչության սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական զարգացման հավանական պատկերը:

Ֆեոդալիզմի ծագման ու զարգացման յօդանիշ (V—XI դդ.) ենթասեկվալուով կարգացվեց 22 զեկուցում՝ նվիրված բալկանյան ժողովուրդների տնտեսական ու քաղաքական կյանքին ու կապերին, նրանց վարչական ինստիտուտներին, աղյուսակաթղթային, պատմական աշխարհագրությանը և այլ հարցերի։ Ի. Դուլչեն (Բուլղարիա) իր զեկուցման մեջ վեր հանեց Բյուզանդիայի պատմությանը վերաբերող այն տվյալները, որ պահպանվել են սլավոնական աղբյուրներում։ Ռումին և բուլղար մեդիստների նախաձեռնությամբ ենթասեկցիան որոշեց սերտ համագործակցություն ստեղծել բոլոր երկրների մասնագետների միջև և ձևականորեն լինել թերակղզու պատմական աշխարհագրության մշակմանը։ Նիստերից մեկում ելույթ ունեցավ Հարավ-արևելյան Եվրոպայի ուսումնասիրման միջազգային սոցիալիստիկ նախագահ Դ. Զակին-Թինոսը (Հունաստան) և բարձր գնահատական տվեց ենթասեկցիայի աշխատանքներին։

Ույ միջուկային (XV—XVII դդ.) ենթասեկցիայում լսվեց 65 զեկուցում, որոնցում շոշափվեցին բազմաթիվ հարցեր՝ կապված թուրքական նվաճումների և թուրքական տիրապետության առաջին ժամանակաշրջանի պատմության հետ։ Հատուկ ուշադրություն դարձվեց թերակղզու բնակչության էթնիկական կազմի փոփոխման, թուրքերի հաստատված վարչական սիստեմի ու վարած հարկային քաղաքականության, քաղաքային կյանքի ու առևտրի զարգացման, շրջանառության մեջ եղած դրամատեսականների, դրոշացիական հարցի ու ազգաբնակչության հարաբերությունների վրա։ Սուր բանավեճ տեղի ունեցավ իերակղզում թուրքական տիրապետության հաստատման սկզբնական ժամանակաշրջանում ըստ լեզված ռեզալիտության թիմարական սիստեմի բնույթի շուրջը։ Թուրք պատմաբաններ Ն. Ինալիկը և Բ. Զուրքը պնդում էին, որ այդ սիստեմը և, ընդհանրապես, ժաշմարիտ ստատուսյան ինստիտուտները չեն ունեցել ֆեոդալական բնույթ։ Առարկելով նրանց, Ա. Տվերիտինովան (ՍՍՀՄ), Ս. Դիմիտրովը (Բուլղարիա) և մյուսները ապացուցեցին, որ թիմարական սիստեմի ու «օտտոմանյան ինստիտուտների» և արևմտաեվրոպական ֆեոդալական սիստեմի ու ֆեոդալական ինստիտուտների միջև էական տարբերություն չի եղել, որ թիմարական սիստեմն ու ժաշմարիտ օտտոմանյան ինստիտուտները կրել են ֆեոդալական բնույթ։

Բազմաթիվ զեկուցումներում լուսաբանվում էին բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, նրանց միջև եղած փոխադարձ կապերն ու փոխազդեցությունները։

Ենթասեկցիայի հատուկ նիստում հաղորդումներ լսվեցին թուրքական այն փաստաթղթերի ու

ձեռագրերի մասին, որոնք պահպանվում են Սոֆիայի, Հենինգրադի, Դիոնիսիի ու Սլովակիայի արխիվներում ու գրադարաններում։ Առաջարկվեց ՅՈՒՆԵՍԿՈ-ի օգնությամբ կազմակերպել այդ փաստաթղթերի սերիական հրատարակություն։

Նուր պատմության ենթասեկցիայում (XVIII—XIX դդ. առաջին կես) կարգացվեց 68 զեկուցում՝ նվիրված բալկանյան ժողովուրդների հասարակական-քաղաքական զարգացմանն ու տնտեսական կապերին, նրանց ազգային զարթոնքին ու վերածննդին, ազգային-ազատագրական պայքարին ու թուրքական լծից ազատագրվելուն։ Այդ ենթասեկցիայում հանգես եկավ նաև տողերիս Նեդինակը, որի զեկուցումը նվիրված էր պոլսահայ տպագրիչների՝ Բուլղարիայում լուսավորություն տարածելու գործում կատարած դերին։

Անդրադառնալով բալկանյան երկրներում կապիտալիզմի զարգացմանը և ազգային-ազատագրական շարժումների վերելքին, գիտնականների ձեռնող մեծամասնությունը գտնում էր, որ, չնայած որոշակի առանձնահատկություններին, բալկանյան տարբեր ժողովուրդների կապիտալիստական զարգացման ու ազգային-ազատագրական շարժումների միջև կան շատ ընդհանուր գծեր, որ սոցիալական պայքարը այդ ժողովուրդների մոտ, որպես կանոն, միահյուսվել է ազգային-ազատագրական պայքարի հետ, հաճախ ընթանալով այդ պայքարի դրոշի ներքո։

Իր զեկուցման մեջ պրոֆ. Ա. Նովիչևը (ՍՍՀՄ) վերլուծելով XIX դ. առաջին կեսի տնտեսական ու սոցիալական տեղաշարժերը փոքր Ասիայում, եկավ այն եզրակացության, որ այդ տեղաշարժերը շատ թույլ էին և ի վիճակի չէին հանգեցնելու Թուրքիայի տնտեսական, սոցիալական ու քաղաքական կյանքի հեղաշրջման և որ հենց այդ թուլությամբ էլ բացատրվում էր թանգիմաթյան ռեֆորմների սահմանափակությունը։

Նուրալույն պատմության ենթասեկցիայում կարգացվեց մոտ 90 զեկուցում, որոնց շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին գրեթե նույնքան գիտնականներ։ Զեկուցումներում, ինչպես և ելույթներում շոշափվեցին բալկանյան ժողովուրդների սոցիալական, տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի ամենատարբեր պրոբլեմներ, ուշադրվել էին առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների տարիներին բալկանյան ժողովուրդների համատեղ պայքարին, բալկանյան պետությունների, ինչպես նաև այդ պետությունների ու մեծ տերությունների փոխհարաբերություններին, նրանց ներքին ու արտաքին դրությունն ու քաղաքականությանը նվիրված զեկուցումները։ Մի շարք ելույթներում մերկացվում էր արևմտյան տերությունների «թողտվության»

քաղաքականությունը ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ, որը և նպաստեց թերակղզու փաստական օկուպացմանը։ Պատմական հարուստ փաստերով լուսարանվում էր բալկանյան ժողովուրդների համատեղ մահու և կենաց պայքարը ընդդեմ գերմանական ֆաշիզմի և նրա տեղական կամակատարների։

Միջազգային հարաբերությունների, ինչպես նաև բալկանյան երկրներում բանվորական, սոցիալ-դեմոկրատական ու կոմունիստական շարժման շուրջը ծավալվեց սուր բանավեճ։ Ա. Նարոչնիցին, Վ. Խվոստովը, Ա. Զուբարյանը (ՍՍՀՄ), Ժ. Նաթանը (Բուլղարիա) և մի շարք այլ գիտնականներ վճռական հակահարված տվեցին ամերիկյան պատմաբաններ Ս. Ֆիշերի, Կ. Կարպատի և այլոց՝ Բալկաններում Սովետական Միության արտաքին քաղաքականության և բանվորական ու կոմունիստական շարժման պատմության հարցերը խեղաթյուրելու փորձերին։

Վեցօրյա սեկցիոն ու ենթասեկցիոն աշխատանքից հետո կոնգրեսի մասնակիցները անցկացրին եզրափակիչ պլենար նիստ, որտեղ հանրագումարի բերվեցին կոնգրեսի արվյունքները և ուրվագծվեցին հետագա անելիքները։ Բարձր ղեհատական տալով կոնգրեսի գիտակա՞ն և քաղաքական նշանակությանը, ելույթ ունեցող-

ներն առաջարկեցին հրատարակել կոնգրեսի բոլոր նյութերը և ձեռնամուխ լինել նախապատրաստական աշխատանքների՝ երեք տարի հետո բալկանագետների համաշխարհային երկրորդ կոնգրեսն անցկոնելու համար։ Այդ առաջարկն ընդունվեց։

Հայ ժողովուրդը դարեր շարունակ բազմաթիվ թելերով կապված է եղել բախտակից բալկանյան ժողովուրդների հետ, իսկ հայագիտությունը բալկանագիտության հետ։ Մեր միջնադարյան մատենագիրները և ճանապարհորդները հաղորդում են բազմաթիվ մեծարժեք տեղեկություններ Բալկանների և բալկանյան ժողովուրդների մասին։ Ուստի ունենք աղբյուրագիտական ծանրակշիռ հիմքեր՝ հուսալու համար, որ մեր հեագետները, միջնադարյան աղբյուրագետները, բյուզանդագետները, թուրքագետները և պատմաաշխարհագրագետները կձեռնարկեն համապատասխան աշխատանքներ և գործուն մասնակցություն կցուցաբերեն բալկանագետների համաշխարհային երկրորդ կոնգրեսին, որը տեղի է ունենալու Աթենքում 1969 թ.։ Եւ կնպաստի ոչ միայն բալկանագիտության զարգացմանը, այլ նաև հայագիտության շրջանակների հետագա ընդլայնմանը։

Ս. ՀՈՎՆԱՆՅԱՆ

ԲՅՈՒՋԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ XIII ԿՈՆԳՐԵՍԸ ՕԲՍՋՈՐԴՈՒՄ

Բյուզանդագիտական կոնգրեսները հրավերվում են յուրաքանչյուր հեղամյակ և մեծ զեք են կատարում հատկապես գիտական կապերի հաստատման ու ընդլայնման ուղղությամբ։ Վերջին կոնգրեսներին, որոնք տեղի ունեցան Ստամբուլում, Մյունխենում, Օխրիդում (Հառավայրվիա), մասնակցեցին նաև սովետական գիտնականները։ Սակայն, եթե անցյալ կոնգրեսներում սովետական գիտությունը ներկայացնում էին 2—3 մասնագետ, ապա Օքսֆորդում ներկա էին 15 գիտնական Մոսկվայից, Լենինգրադից, Սերևնից և Քրիլիսից՝ ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Վ. Ե. Հազարեի ղեկավարությամբ։ Օքսֆորդի կոնգրեսին մասնակցեցին մոտ 700 հոգի՝ 23 երկրից։ Ներկա էին աշխարհի խոշորագույն բյուզանդագետները։

Կոնգրեսի հանգիսավոր բացումը տեղի ունեցավ սեպտեմբերի 5-ին։ Մի շարք գիտնականներ զեկուցեցին բյուզանդագիտական որոշ կենտրոնների ընթացիկ գործունեության և առանձին մասնագետների վիճակի մասին։

Հաջորդ սրբ սկզբից պլենար նիստերը։ Գլխավոր և հարակից զեկուցումները նախապես

հրապարակված էին, ուստի զեկուցողները սահմանափակվեցին կարճ ելույթներով։

Կոնգրեսի ընթացքի մասին պատկերացում տալու համար թվարկենք գլխավոր զեկուցումները։ Գ. Մարավլիկ, Բյուզանդիայի զեքը Սև ծովի հյուսիսային ափերի թուրքական ժողովուրդների շրջագում։ Գ. Օստրոգորսկի, Բյուզանդա-սերբական հարաբերությունների պրոբլեմները XIV դ.։ Գ. Գ. Լիսավրին, Ա. Գ. Կամպան, Զ. Վ. Ուլալցովա, Հին Ռուսիայի և Բյուզանդիայի հարաբերությունները XI—XIII դդ. առաջին կեսում։ Մ. Վելիմիրովիչ, Բյուզանդական երգարվեստի աղբյուրությունը սլավոնական երկրների երաժշտության վրա։ Գ. Անգելով, Բուլղարական երկրները և բուլղար ժողովուրդը բյուզանդական պետության սահմաններում՝ XI—XII դդ. (1018—1185)։ Է. Կոնդուրակի, Բ. Բաուկես, Թ. Գիսկոնու, նոր ուսումնասիրություններ Սաուրին Դանուբի բյուզանդական limes-ների վերաբերյալ X—XI դդ.։ Կ. Վալցման, Բյուզանդական մանրանկարչությունը և պատկերազրույթությունը XI դ.։ Ս. Սաուրնկ, Բյուզանդական երաժշտությունը վերջին ուսումնասիրություն-